



Ա Ջ Գ Ա Յ Ի Ն .

ԵԿԵՂԵՑԻ ԿԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Մ Ա Յ Ի Ա Թ Ո Ռ .

Ամսոյս 3-ին Ս. ՍԱՀԱԿՍԵ ԵՒ Ս. ՄԵՍ-
ՐՈՎԵԱՅ յիշատակի օրը Օշականում Երանելի
Թարգմանչի շիրմի վերայ կառուցուած ե-
կեղեցւոյ տօնն էր, ուստի և այնտեղ ըստ
սովորականին հանդիսաւոր պատարագ մա-
տուցուեցաւ ի ներկայութեան ոմանց միա-
բանից, Ծեմարանի աշակերտաց և շրջա-
կայքից եկած ուխտաւորաց: Պատարագին էր
Արժանապատիւ Տ. Նահապետ վարդապետը:
Պատարագից յետոյ հոգեհանգստեան պաշտօն
կատարուեցաւ և Արժ. Տ. Թովմայ վարդա-
պետը մի համառօտ քարոզով բացատրեց այդ
օրուայ տօնի նշանակութիւնը, ցոյց տալով
այն մեծ ծառայութիւնը, որ արել են մեզ
համար ս. Սահակ և ս. Մեսրոպ հայերէն տա-
ռերի գիւտով և ս. Գրքի թարգմանութեամբ:

Ամսոյս 15-ին տեղս եկաւ Նորին Ս. Օ-
ծութեան ներկայանալու Ռուսաց ընդհանուր
հիւպատոս Համում (Դամասկոսի մօտ) պ.
կոնստանդին Կամսարականը:

Արժ. Տ. Արսէն վարդապետ Ղըրճեանը
բարերար գտած լինելով՝ Նորին Ս. Օծու-
թիւնից թողաւ թիւն ստացաւ Ռուսաստան
գնալ իւր ուսման մէջ կատարելագործուելու
համար:

Գ. Ճ Ե Մ Ա Ր Ա Ն .

Ծ Մ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ Ն .

1896 թուի նոյեմբերի 16-ին վախճանուեցաւ
Ճեմարանի ուսուցիչ Վարդան Արովեանը: Ճեմար-
անի Վարչութիւնը ամենախոնարհ յայտարարու-
թեամբ թ. 243 նոյն ամսի 18-ին դիմեց Նորին Վե-
հափառութեան Սրբազնագոյն Հայրապետին և խնդը-
րեց Նորին Սրբութեան բարեհաճ տնօրէնութիւնը
հանգուցեալի որբերն ապահովելու առաջարկելով
մի քանի հնարաւոր միջոցներ, նոյն ամսի 18-ին
Նորին Սրբութիւնը մակագրութեամբ թ. 1551
բարեհաճեցաւ պատուիրել Ճեմարանի Վարչու-
թեանը 1) տալ հանգուցեալ Արովեանի ընտանիքին
ց1-ն սեպտեմբերի 1897 ամի հանգուցեալի տարե-
կան ռոճիկը. 2) հանգուցեալի ընտանիքին կենսա-
թոշակ նշանակելու համար ներկայացնել իւր ժա-
մանակին առանձին առաջարկութիւն. 3) դիմել
Ռուսաստանի Հայոց թեմակալ առաջնորդներին և
ուժ որ Վարչութիւնը կարեւոր համարէ հանգու-
ցեալի ընտանիքի համար նպաստ խնդրելու և 4) Ա-
բարատ ամսագրի և Հայոց միւս պարբերական թեր-
թերի մէջ նոյն նպատակի համար բարեպաշտ ազ-
գայիներին օժանդակութեան հրաւեր կարգալու:

Նորին Վեհափառութեան բարեհաճ տնօրէ-
նութեան մասին Ճեմարանի Վարչութիւնը իւր
ժամանակին դիմեց ուժ որ պէտք էր առանձին ծա-
նուցագրերով և պաշտօնական գրութիւններով
խնդրելով բարեպաշտ ազգայիներին աջակցելու Նո-
րին Վեհափառութեան, որպէս զի հանգուցեալի որբե-
րի անուխով մի գումար կազմուի ևւ ևորա տկոսիսով ևնցա
անկեան ևւ դաստիարակութեան պէտքերը հոգացուին:
Վեհափառ Հայրապետի բարի ձեռնարկութեանը
օժանդակեցին ինչպէս երևում է Ճեմարանի Վար-
չութեան կողմից ամէն ամիս Աբարատի մէջ հրա-
տարակուած, ծանուցումներից, ոչ միայն թեմակալ
առաջնորդները և պարբերական թերթերը, այլ և
մասնաւոր անձինք թէ եկեղեցական և թէ աշխար-
հական դասակարգից: Գրամական օժանդակութեան
ընդհանուր գումարը առ 1-ն յուլիսի տարւոյս եղաւ
3032 ռուբլի 37 կոպէկ, որի մանրամասն հաշիւը
կցուում է սորա հետ:

Որբերի ապահովութեան խնդրին ջերմ հա-
մակութիւն ցոյց տալով Մոսկուայում բնակող
Մեծ. Պ. Իսահակ Ժամհարեանցը ամբողջապէս
նուիրեց որբերին իւր առանձին պայմանագրութեամբ
ձեռնարկած շաշատուր Արովեանի երկերի, հրա-
տարակութիւնը, ընդամենը 3000 օրինակ, իւրա-
քանչիւրին գին նշանակելով պայմանեալ 50—75
կոպէկի փոխարէն մի ռուբլի և ամբողջ հրատարա-
կութիւնը յանձնելով այրի Տիկին Արովեանի տնօ-
րէնութեանը, Մեծ. Պ. Աղէքսանդր Մանթաշեանն

յանձն առաւ իւր հաշուով բարձր ուսման ղրկելու հանգուցեալ Արովեանի որդուն Կոստանդինն որ այս տարի աւարտելով ճեմարանիս դպրոցական շըրջանն՝ արդէն ուղևորուեցաւ արտասահման:

Ճեմարանի Վարչութիւնը Ա. հասփառ Հայրապետի վերոյիշեալ պատուէրներն համաձայն ներկայ 1897 ամի ծախուց նախահաշիւը կազմելու ժամանակ ամենախոնարհ յայտարարութեամբ ի 25 դեկտեմբերի 1896 ամի թ. 274 խնդրեց Նորին Ա. հասփառութեան բարեհաճ տնօրէնութիւնը նշանակելու հանգուցեալի ընտանիքին տարեկան 300 ուսուցիչ կենսաթոշակ որ և Նորին Ա. հասփառութեան կողմից յանձնուած է ս. Էջմիածնի Սինօզի տնօրէնութիւնը:

Հանգուցեալի որբերի անունով ստացուած գումարներից մի ապահով և անձեռնմխելի գրամագլուխ կազմելու համար ինչպէս յայտարարուած էր այդ մասին ձեռնարկութեան սկզբում, ճեմարանի Վարչութիւնը բոլոր 3000 ուսուցիչ գումարը որ պահուում էր արժէթղթերով և առձեռն գըրամով, 23-ին մայիսի տարւոյս առանձին գումարեմբ թ. 53 փոխադրեց ս. Պետերբուրգ Պետական բանկի միջոցով հանգուցեալ Վարդան Արովեանի որբերի, այն է Կոստանդինի, Վիկտորիայի, Լեոնի, Աշոտի և Շուշանիկի անունով անուանական 4% Պետական բենտայի տոմսեր ստանալու:

Տեսուչ Ճեմարանի

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆ:

ԸՆԳՃԱՆՈՒՐ ՀԱՇՒՎ ԾԵՄԱՐԱՆԻ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՈՒՍՈՒՅԻՁ ՎԱՐՎԵԱՆ ԱՐՈՎԵԱՆԻ ՈՐԲԵՐԻ ԱՆՈՒՆՈՎ ԱՍՍՈՑԻՈՒՄ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐԻ:

Ն Ո Ւ Ի Ր Ա Տ Ո Ւ Ն Ե Ր .

	Ռ.	Կ.
Գեր. Սուքիաս արքեպիսկոպոսի միջոցով	428	—
Հայուհեաց բարեգործական ընկերութիւնից	40	—
Պ. Բագրատ Կաւասարզեանից	5	—
Արովեան եղբայրներից, Թիֆլիս	100	—
Պ. Ժանդարեան Յ. Ռեգայից	5	—
Էգիլեան Արամ սարկաւազից, Գարուստարայ	16	—
Պ. Խարակելեանից, Եկատիրինօգար	25	—
Կարճեանցի Սահակ ք. Տ. Արրահամեանից	1	—
Պ. Գրիգոր Թով. Այվազեանից, Բագու	25	—
Տ. Մարտիրոս ա. քահ. Տէր Պօղոսեանից, Աղէքսանդրապօլ	10	—
Երևանու թեմ. գարանցի Տեսչից	40	—
Հայրապետական Գիւանից (Արգար Յովհ.)	300	—
Յ. Պատկանեանից, Մուսկուա	3	—
Թախտաճեան Մ. Սմիղանդից	60	—
Վաղարշապատի բարեգործական ընկերութեան Ճիւղից	25	—
գումար	1083	—

Տիրացու Երուանդից, Գաշուսուցի	1	—
Օր. Մարգարիտ Բարայեանից, Թիֆլիս	10	—
Գեր. Գէորգ արքեպիսկոպոսից, Թիֆլիս	213	77
Գեղամեան Տէր Եղիշէից, Աթամալեանի պակի փոխարէն	80	—
Մովսէս Տէր Թովմասեանից, Վաղարշապատ	3	—
Միքայէլ Սմրատեանից, Ագուլիս	8	—
Հայրապետական Գիւանից (Արգար Յովհ.)	300	—
Գեր. Գէորգ արքեպիսկոպոսից (Արգուին)	14	—
Հայրապետական Գիւանից (Արգ. Յ.) երկիցս	250	—
Բես. Կառավարիչ Յուսիկ վարդ. ապ. 2-ին	200	—
Արց. Կառավարիչ Գարեգին վարդ. ապ. 25-ին	306	—
Բագուից Տիկին Աթամալեանի նուէր ապր. 25-ին Եղիշէ ք. Գեղամեանի միջոցով	500	—
Արժէթղթի տոկոս 800 ուսու. մարտի կըտրոն մայիսի 15-ին	7	60
Բագուից Տիկին Խանում Պօղոսեանից մայիսի 16-ին Եղիշէ ք. Գեղ. միջոցով	50	—
Մայիսի 26-ին ստացուեցաւ Հայրապետ Աւագեան Բուզաղեանից, (Ասխարատ)	4	—
Յունիսի 19 Գէորգ քէզ Մելիք Գարամեանից, (Ասխարատ)	2	—
Առ 1-ն յուլիսի ընդհանուր մուտքի գումարն է	3032	37
Դուրս գալով Տիկ. Արովեանին վճարած 40 ուսուցիչն	40	—
	կը մնայ	2992-37
Տոկոսաբեր թղթի վճարուած է	2897-35	
	կը մնայ	95-2

ԵՍՏԻՍԹՈՒԹԻՒՆ. Յանուն Վարդան Արովեանի որբերի գումարուած է ընդամենը 2986 ուսու. 37 կոպ. ի հաշիւ այդ գումարի նոյն որբերի անունով գնուած են տոկոսաբեր թղթեր 1) 17 փետրվ. 97 ամի 800 ա. 4% բենտա 800 ուսուցիչ 47 կոպէկ. 2) 29-ին մարտի 97 ամի 800 ա. 4% բենտ. 796 ա. 42 կոպ. և 3) 15 մայիսի 97 ամի 1300 ա. 4% բենտ. 1300 ուսու. 46 կոպ. ընդամենն 2900 ուսու. 4% ա. թուղթ, որի համար վճարուած է 2897 ուսու. 35 կոպ. մնացորդ 95 ուսու. 2. կոպ. 23 մայիսի ուղարկուեցաւ Պետական բանկ 3000 ուսուցիչի այն է 2900 ուսուցիչ տոկոսաբեր թղթերը և 100 ուսուցիչ առձեռն գրամ Վարդան Արովեանի որբերի անունով երեք հատ մի հազար ուսուցիչանոց անուանական արժէ թղթեր ուղարկելու. տոմսերը և գրամը Ս. Պետերբուրգի Պետական բանկը ուղարկելու համար ծախուեցաւ 9 ուսուցիչ 14 կոպէկ. մի հարիւր ուսուցիչ գումարը ուղարկուեցաւ հաշիւն ամբողջանելու համար. այդ գումարից ճեմարանի Վարչութեանը հասնելու է 4 ուսուցիչ 98 կոպէկ. սորա հետ գումարելով փոշտին վճարած 9 ա. 14 կոպէկը, կըլին 14 ա. 12 կ. որ հասնելու է ճեմարանի Վարչութեանը ապագայ եկամուտից կամ արժէթղթերի տոկոսիցից:

Տեսուչ Ճեմարանի

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆ:



Տ Ա Վ Ա Հ Ա Յ Ք .

Մինչդեռ մեր վիճակի ազգերը վարդազոյն պագայի յուսով են սողորուած : Ճաճկահայր անլուր կոտորածներից յետոյ գոյութեան կռիւ է մղում աւելի սարսափելի տարրի դէմ : որ է ներութիւն : անձկութիւն և սովի վտանգ : Աւստի մեր այսօրուան օրակարգի առաջին կարևոր և անհրաժեշտ խնդիրն է թշուառացած Ճաճկահային ազատել : սովատանջ աղքատութեան ճիրաններից փրկել : Մեծ են այն ջանքերը որ լինում են մասնաւոր անձանց : ընկերութեանց : Հասարակութեանց թէ մերազնեաների և թէ օտարների կողմից հայութեան այդ օրհասական վայրկենին իւրովսանն օգտակար լինելու այդ անմեղ զոհերին :

ԵՊԱՍՏ կարօտակներին և որբակցներին .— Խարմերգից հաղորդում են «Մասիսին» (թիւ 155) որ Մր. Աէյթսի նախագահութեամբ նպաստ բաշխելու յանձնաժողով է կազմուել երկու հայ բողոքական և երկու հայ լուսաւորչական անդամներից : որոնք վստահելի և գործին տէր անձեր են :

— Բդիից նոյն լրագրի նոյն համարում մայիսի 10-ից գրում են : 300 ոսկու նոր նպաստ հասու տեղիս բողոքական յանձնախումբին՝ գիւղացիներին սերմացու ցորեն տալու համար : Թէև մի քանի գիւղերի համար ցանքսի ժամանակն անցել է : սակայն Հիրտէֆ : Խօլքար և ուրիշ մի քանիների համար ճիշդ ժամանակն է :

— «Ծաղիկ» շաբաթաթերթի № 22-ում կարդում ենք՝ որ Պեսակակ նպաստամատոյց յանձնաժողովը հայ կարօտեալներին բաշխուելու համար 65000 ղուրուշ է ուղարկել պատրիարքարանին : Այս առթիւ որբերի առժամանակեայ խնամակալութեան տեղ ս. Պատրիարքի նախագահութեամբ որբերի և կարօտեալների մի մնայուն յանձնաժողով է կազմուել : որի անդամներն են Տէր Աահրամ եպիսկ. Մանկունի : Տ. Գէորգ ծ. վ. Երէցեան և պ. պ. Գրիգոր Խարեան : Միհրան Սէթեան : Սահակ Ղազարոսեան : Սարգիս Թաշճեան և Մանուկ Արզեան :

Թուրք ժողովուրդն և կառավարութիւնը հայերին կոտորելուց : Հայաստանն աւերելուց և հայի բովանդակ կարողութիւնը յափշտակելուց յետոյ մարդասիրտար նպաստ են ուղարկում կոտորածից ապրած իրենց զոհերին : Անշուշտ այս էլ մի առիթ է որ վամբերինները և այլ ազգութեաց շիք հրէաները թմրուկ զարկեն և հոշակեն թուրքի և իւր սուլթանի ողորմածութիւնը :

— Ազգ. արհեստանոցի խնամակալութիւնը : յունիսի մէկից սկսեալ : Թիճարէթ խանի եկամուտից ամսական 50 օսմանեան ոսկի նպաստ պիտի

վճարէ Ազգային հիւանդանոցի հոգաբարձութեան : սոյն գումարով 100 որբ պատսպարելու : կրթութիւն տալու և արհեստ սովորեցնելու համար : Գաւառներից առաջին անգամ 350 որբ պիտի բերուին : մնացեալ 250-ը մօտակայ թեմերը պիտի ղրկուին կամ մասնաւորների որդեգիր պիտի տրուին :

Այս առթիւ «Մասիսի» (թ. 161) Բաղէշի թղթակիցն իրաւամբ նկատում է «10 որբ կուշտ պահել և 1000 որբ անօթութեան վտանգի մէջ թողնել արդարութիւն չէ երբէք : Ասկէ զատ զանոնք իրենց ծննդավայրէն հեռացնելով բոլորովին հակառակ կլիմայի : սովորոյթի և ազգեցութեանց տակ զաստիարակել՝ կարծեմ՝ օգտակար ուղղութիւն մը չէ : նա մանրամասն հաշուով ցոյց է տալիս որ եթէ բաղմահայ Բաղէշի կենդրոնից Վ. Պօլիս ուղարկելիք 20 որբի համար լինելիք ծախքը աւելացնուի Բաղէշի ս. Խնդրակատար նշանաւոր վանքի եկամուտի մի որոշ մասի վերայ : կարելի է 100 որբ սնուցանել և կրթել : առանց վանքի նիւթականի վերայ ծանրանալու : մի վանքի : որի մեծամեծ եկամուտների վարիչը ու տէրը այժմ Աամիս գիւղացի մի քահանայ է : Մասիսի խմբագիրը դիտում է : որ եթէ Բաղէշից առայժմ նոյն իսկ 20 որբ պահեն : դարձեալ աւելի օգտակար է այդ առաջարկը : Ամեն տեսակ օգնութեան և քաջալերութեան արժանի են այն հաստատութիւնները : որոնք որբերն իրենց տեղում ուղում են պահպանել :

— Աւստի ուշադրութեան արժանի է Աարագայ վանքի հոգաբարձական ժողովի դիմումը : որ այդ երբեմն ծաղկեալ վանքում 15 որբ հաւաքելով վերաբացել է հոշակ վայելող ժառանգաւորաց գպրոցը : Ահա այդ է հրաւերը :

«Ղոչում կրնենք բոլոր ազգայնոց մարդասիրութեան : որք ի Թուրքիա կամ յարտասահման և կառաջարկենք որ անոնք որք իրենց մէջ որդեգիրներ պահելու դիւրութիւն չունին : տարեկան միայն 5 ոսկի տան մեղ : յանձնառու կըլինինք նոյնչափ գումարով մէկ որբ կերակրել : հագուեցնել և դաստիարակել յանուն բարեբարին : որ կը վճարէ նորա ծախքերը :

«Սոյն առաջարկութեան գործադրութիւն Ամեն. ս. Պատրիարք Հօր բարձր հովանաւորութեան ներքեւ գրուած լինելով : որդեգիր ունենալ ուզող բարեբարները կարող են իրենց հաճութիւն յայտնել լրագրութեան միջոցաւ կամ ուրիշ ո և է կերպերով և գումարը յանձնել ս. Պատրիարք Հօր : Հոգաբարձութեանս կողմէն որդեգրող բարեբարին պիտի ծանուցուին իր որդեգրի անուն : մականուն : տարիք : կենսագրութիւն և այլն պարագաներ : և պարբերաբար տեղեկութիւններ ալ պիտի հաղորդուին՝ եթէ բարեբարն ուղէ : Իսկ որբանոցի ընդհանուր հաշիւ տարեգլխին՝ ս. Պատրիարք Հօր ղըրկուելէ յետոյ : պիտի հրատարակուի :

— Որբանամ յանձնաժողովն ընդունել է Էգիրնեցւոց խնդիրը՝ բուն իսկ Էգիրնէի մէջ հաստատել մի որբանոց 20 որբի համար:

— Անգլուհի օր. Բաք Կ. Պօլիս է եկել բարեգործութեան նպատակով և մտադիր է իւր հաշուով մի որբանոց հիմնել Կիպրոսում կամ Մերսինում կամ ծովեզերեայ մի այլ քաղաքում: Ուր կարողանայ տարին գէթ երկու անգամ այցելել:

— Ռոզոսթոյի մեր բողոքական հայ եղբայրները 2 1/2 ամսուայ ընթացքում հաւաքել են 16508 ղուրուշ և ուղարկել ս. Պատրիարքին: Խնդրելով որ անմիջական կարօտելոց հացին միայն յատկացուի:

— Խարբերդի միսսիոնարներն ընդարձակել են իրենց որբանոցը, ուր մինչև 300 որբ պիտի ընդունուին:

— Մաղնեսայի երկու թաղերի ազգայինները 30 ոսկի հանգանակելով յանձնել են առաջնորդարանին ի նպաստ որբերի:

— Իզմիրի մէջ մի քանի օրիորդներ և տիկիներ ի նպաստ կարօտեալների մի վիճակախոջ են կազմակերպել, որի արդիւնքը գոհացուցիչ է եղել:



ԳՊՐՈՅԱԿԱՆ ԱՅՈՒՄԻ. — Տաճկահայերն իրենց այս տագնապալից օրերում չեն մոռնում իրենց որդւոց, որբերի կրթութեան գործը և եռանդաբին աշխատում են հետզհետէ աւերեալ դպրոցները նորոգել, փակուածները բաց անել, դասաբքեր հայթայթել: Մի ազգ որ այդպէս կրթութեան յարուել գիտէ, նա կարող է բնատուօր օրեր տեսնելու յոյս ունենալ և մինչև աշխարհիս վերջն իրրև ազգապրել: Աւելի զարմանալին այն է, այս դժբախտ աղքը մտաւոր մեծ կորով է ցոյց տուել իւր թըշուառութեան օրերին: Այստեղ միշտ մեծ գեր է ունեցել մեր եկեղեցին իւր հովիւներով և վանքերով:

Դպրոցները բացուում են և դասագրքերի կարիք կայ, բայց հային ի՞նչ է աւելի հետաքրքիր ուսուցմանց մէջ, քան եթէ իւր եկեղեցու և նորա աստուածազգեսաց եկեղեցական հայրերի գործունեութիւնը, որ պիտի առաջնորդող լինի ներկայ սերունդին: Եւ ահա կարիք է զգացուում եկեղեցական պատմութեան դասագրքի, և մեր եկեղեցու անձնուէր հովիւներից Մելքիսեղեկ արքեպիսկոսի եկեղեցական պատմութիւնը սպառուած լինելով շուտով մի քանի փոքրիկ փոփոխութիւններով տրւագրութեան պիտի յանձնուի, որովհետև թէ Կ. Պօլսում և թէ մանաւանդ զաւառներում մեծ պահանջ կայ այս դասագրքի, որ տակաւին լաւագոյնն է նմանօրինակ երկասիրութեանց մէջ:

— Մասիսը (թ. 155) հաղորդում է, որ Ազգային հիւանդանոցի պատրաստել տուած և ի վա-

ճառ հանած դպրոցական սեռակները Ասուճական խորհուրդն առաջարկում է բոլոր դպրոցների մէջ գործածել, որոնք ըստ ամենայնի յարմար և արժան լինելով հանդերձ այն առաւելութիւնն ևս ունին, որ սոցա օգուտը յիշեալ հաստատութեան մէջ պատասպարուած թշուառների համար է:

— Ազգային ժողովի Տնտեսական խորհուրդն ըստ յանձնարարութեան քաղաքական ժողովի որոշել է հանգանակութեան մի ժապաւինեալ տոււար տալ գաւառական կարօտ վարժարանների համար գասագրքեր և կրօնական մատեաններ հայթայթելու:

— Ասուճական խորհուրդը որոշել է և առաջարկել Տնտեսական խորհրդին, որ հաճի Մայր եկեղեցու թաղական խորհրդի հետ կարգադրութիւն անել Էթմէյզանիի (Կ. Պօլսում) նախակրթարանը վերաբանալու:

— Հաս գիւղի թաղական խորհուրդը նախաձեռնութեամբ նորընտիր քարոզչի յունիսի 7-ին բացել է Ս. Ներսէսեան օրիորդական դպրոցը, որի աշակերտուհիները մինչև ցարգ ամերիկեան վարժարան էին յաճախում:

— Ծաղիկ շարթաթերթին Կարնից գրած նամակից երևում է, որ մանկապարտէզները կամ աւելի լաւ ասած ծաղկոցները ծաղկում են հետզհետէ Տաճկահայաստանում և տարածուում: Այսպէս Տիկին Եսթեր Կարնում այս գործը յառաջ տանելուց և օգնականներ պատրաստելուց յետոյ մեկնում է Երզնկա: Թղթակիցը հետևեալն է ասում Կարնոյ ծաղկոցի հանդիսի առթիւ. «Քանի՜ քաղցր էր լսել այդ մատաղ շրթունքէն բղիտոց գրական և գիտական թոժովումները և երգերու թրթուումը, Երևցածն այն էր, որ այս հաստատութեան ոգին էր կարգապահութիւնը, զաւանուժըն էր գիտակցութիւնը, իսկ հաւատքը յարատուութիւնը»:

— Մասիս և Ծաղիկ լի են դպրոցական վիճաճակի վերաբերեալ խնդիրներով, որոնցից առաջինը իւր թ. 150-ի առաջնորդով առաջարկում է դպրոցներն աւելի ծաղկեցնելու և նոցա յարատուութիւն տալու համար քաղաքների և գիւղաքաղաքների զանազան թաղական դպրոցները միացընել և զիմելով Սկիւզարի և Երզնկայի թաղականներին բացականում է, ի՞նչ խեղճ փոռասիրութիւն: Այո՛, լաւ է ունենալ տեսակ մը նախանձանխնդրութիւն, որով ամեն մարդ ուզէ նախ փայլեցնել այն բանը, որ անմիջապէս իրեն կը վերաբերի: Բայց վարժարաններու համար՝ խնդիրը բոլորովին տարբեր է: Պէտք է ասենք որ այստեղ էլ խնդիրը նոյնն է, բայց բանն այն է, որ մեր աշխուսուածները չեն ներում մրցելու դպրոցական գործում: այլ միայն միանալով հնարաւոր կը լինի ընդհանուր ջանքերով բարեկարգել:

Իսկ «Ծաղիկ»-ի Աղանայի թղթակիցը զանգատուում է, որ տեղի առաջնորդական փոխանորդըն անհոգ է, ժողովներն ու ազգայիններն անտարբեր են այնպէս որ մեր ազգայիններից 400—500 աշակերտ օտար վարժարաններ են յաճախում, վճարելով տարեկան 950 ոսկու շափ գումար օտարներին: Եթէ հայոց դպրոցները բարեկարգ լինեն և տան աշակերտին այն ինչ որ օտարներն են տալիս, կարծում ենք, հայն երբէք օտար դպրոց չի յաճախիլ, ուստի միութիւն և բարեկարգութիւն է պէտք մեր Տաճկահայոց դպրոցների համար:

—Մեր ասածին մի ակներև ապացոյց է տալիս «Մասիս» իւր թ. 265-ի առաջնորդողով, Խնդիրն այս է: Կնկիրքի հռովմէական հայոց առաջնորդը, «գերապայծառ» ֆրանսացի ֆրէրներ հրաւիրելով նոցա է յանձնում հայ զաւակների կրթութիւնը: Հատ շանցած ծնողները տեսնում են, որ իրենց որդիքը մի քիչ ֆրանսերէն թոթովելուց զատ ուրիշ բան չեն սովորում: Աւստի շատ ծնողներ մի հայ դասատու վարձելով 30 տղայ են յանձնում: Անց ամիս շանցած հայերը հետզհետէ դիմում են այդ դպրոցը: Ֆրէրները ֆրանսիոյ հիւպատոսի միջոցով փակել են տալիս այդ դպրոցը: Ժողովուրդը դիմում է իշխանութեան, որ բացատրում է թէ այդ տեսակ մասնաւոր հանգամանք ունեցող դպրոցը կարող է բացուիլ նախ եթէ գերապայծառը համարէ ազգային վարժարան և եթէ դասատուն վկայական ունենայ: Բայց այս պայմաններն անգործադրելի են մնում: Արդ խմբագիրը հետևեալ հարցումներն է տալիս. «Որ և է առաջնորդող կրնայ և պէտք է որ իր ժողովրդի դաստիարակութիւնը օտար ձեռքերու և մանաւանդ օտար կղերական ձեռքերու յանձնել: Եւ պատասխանում է ինքը «հայ ժողովուրդը, հայ դասատու և հայ դպրոց կուզէ»: Այս առթիւ խմբագրութիւնը հրաւիրում է կաթողիկէ հայոց ս. Պատրիարք Ազարեանի ուշադրութիւնը:

ԳԱՂԹԱՎԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԽՆԴԻՐ. — Գաղթականութեան ոգին մի հրէշ, մի ճիւղ է, որ մտել է հայութեան մէջ և հայութեան գոյութեանն է սպառնում: Չենք ուզում և տեղը չէ սորա պատճառների վերայ մանրամասնութեամբ խօսել: Ամեն միջոց պէտք է գործ դնել նոր գաղթելու պատճառները վերացնել, իսկ ակամայ գաղթականներին էլ վերադարձնել, ժողովուրդն առհասարակ մանաւանդ թէ մեր ժողովուրդը սերտ կապուած է իւր հող ու ջրի սրբավայրերի հետ և միշտ ակամայ է բաժանուել իւր պապերի գերեզմաններից: Սակայն ի զուր չէ «Մասիս» (թ. 163) գրում. «Ով կրնայ գիւղացու գաղթականութիւնն արգելել, մանաւանդ ով խիղճ կրնէ արգելելու: Պարսերու շակ ձեռնուած, օրուակ հարցիկ կարօս, փաղտակ սերմացուն լուծի և արջը ներկերու հաւար կըր կը պակսի: Նիւթական այս ազէտներու մէջ

երկրի տնտեսական ընդհ. վիճակը կրիշոռե իւ յոյսերը և վերջապէս ինքըզինքը կը յանձնէ բախտին ու գաղթելու ճամբան կը բռնէ»: Արդարև ճիշտ է յարգելի խմբագրի նկատածը թէ «քառորդ դար, կէս դար առաջ մեր պանդուխտներու կեանքը յաճախ ողբերգութիւն մըն էր, մօր մը ու նշանածի մը արցունքներովը ցօղցօղուած: Այսօր պանդխտութիւնը սոսկալի գաղթականութեան մը փոխուած է. ընկերային աղէս մըն է, սևեռակալ (?) աղէտի մը հետևանքը»: Աւելի պարզ անհասարին էր մի բարբարոսական երկրում, որպիսին Թիւրքիան է, խօսել: Գալով աղէտների առաջն առնելու միջոցներին՝ խմբագիրն առաջարկում է, որ մեր հարուստներն՝ օրինակ առնելով միսիոնարներից՝ նպաստեն ժողովրդին տալով անասուն և ցորեն աշխատելու և ցանելու համար: Համաձայն ենք խմբագրի հետ, որ երկրում ժողովրդին պէտք է նպաստել, որովհետև զուրը նպաստներ բաշխելով գաղթականութեան աւելի զարկ ենք տալիս: Սակայն պ. խմբագիրն այն չէ ասում, թէ ինչ պէտք է անել, որ թուրք մոյի խուժանը և վարի գաղանքուրդ հրոսակները շարին հայ գիւղացու ցանքերը, շխին նորա եղն ու գոմէշը, վաստակը, օրապահիկը և վերջն էլ շսպանեն: Մտածելու կէտն այս է. վէրքն արմատից է, արմատը պէտք է բուժել, ձուկը զըլխից է հոտում:

Չնայելով թրքական անտանելի լծի դառնութեան, մեր ժողովուրդն այնուամենայնիւ շատ տեղերից փտահելով, որ բարբարոսութեանց և սխալման կը լինի, շտապում է հայրենիք վերադառնալ, Բուլղարիայից վաղուց է որ շատ հայեր վերադարձան: Այժմ էլ «Ծաղիկ» շարաթաթերթում (թ. 21) կարդում ենք, որ Նգիպտոսի նախարարների խորհրդի որոշմամբ Խոյսիլիէ շոգենաւային վարչութիւնը ձրի Կ. Պօլիս պիտի փոխադրէ այն հայ գաղթականները, որոնք փախադում են իրենց տեղը վերադառնալ: Եւ իրօք քիչ յետոյ Նպիպտոսից վերադառնում են շատերը:

—Տաճկահայոց սոսկալի դրութիւնը այն աստիճանի է հասել, որ երկիւղ կայ թէ ժողովրդի մէջ մուրացկանութեան ոգին կարող է զարգանալ, միւս կողմից էլ ողորմութիւն անողներն ևս արգէն ձանձրացել են: «Մասիս»-ի թ. 157-ում Գ. Ա. ստորագրութեամբ մի պարոն ուսումնասիրելով խնդիրը իրաւամբ դիտում է, որ հայն արհեստով մուրացկան չէ: Ոչ թէ միայն Տաճկահայոց մէջ գիւղացիք ակամայ աղքատութեան մասնուած ընտանիքները մի տեսակ երկիւղած յարգանքով են պահպանում, այլ և Ռուսահայոց մէջ ցարդ համարեա ամեն տեղ անկար աղքատների պետական հարկերը հասարակութիւնն սիրայօժար բաժանում է իւր կարող անգամների մէջ. և հայոց մէջ ինչպէս «Մասիս»-ը դիտում է, մուրացիկ են «Ա. Աշուղները, որ աւելի

Ճիշդը ժողովրդական երգիչներ էին և դռնէ դուռ պատելով կերգէին: 2. Ցիրամօր բորոտները որ Աւնայ հռչակաւոր վանքի ծոյլ զիւղացիներն էին: 3. Հաշմանդամները, գաճաճները և ուրիշ այս տեսակ մարմնական թերութիւն ունեցողները, որ մինչև այսօր իրենց այս դժբաղդ կազմութիւնը կը շահագործեն մուրացկանութեամբ: 4. բոշա-ները կամ մրդապ-ները, որոնք ըլլան հայ, ինչպէս Սեբաստիոյ ու Էնկիւրիի կողմերը, ըլլան բուն գնչու մեր տուներու սեղանէն աւելցած կերակուրներով ու փշրանքներով կապրէին: 5. վերջապէս ասորի կամ ղպտի խաչագողներ, որ տնէ տուն կը պտտէին իրենց լեզուով գլուխ մը աւետարան կարգալու համար:»

Յարգելի պարոնը խօսելով մուրացկանութեան գէժ առնելու հնարների մասին յայտնում է այն միտքը որ մենք բարեբարութիւն անել չգիտենք, ուստի մեր բարիքից չարիք է ծնում: Նա ասում է. «Փոխանակ գիւղերում ամեն օր մի քանի փարայ տալու: պէտք է այնչափ տալ մի ընտանիքի, որ նա ամեն օր չգայ և մուրայ, այլ գնա և իրեն համար աշխատանքի ձանապարհ գտնէ:» Խօսելով միսիոնարների օգնութեան եղանակի մասին՝ պատմում է, որ նոքա տեղ տեղ ժողովրդին օգնել են ցորեն տալով, բայց կալի ժամանակ տուածը յետ ստանալու պայմանով: Անշուշտ աշխատելու ընդունակ աղքատին այս տեսակ օգնութեան ձևերըն աւելի յարմարաւոր են, այնպէս որ նա ինքը կարողանայ ոտքի կանգնել իւր աշխատանքով ու ջանքերով: այսպիսով գիւղացու մէջ կը գարգանայ արժանապատուութեան զգացումը, և նա կը զգուի ուժեղ, աշխատելու ընդունակ, բայց ծոյլ և դատարկագորտ մարդկանցից, որոնք վերջ ի վերջոյ անպատկառ մարդիկ, գող կամ աւաղակներ պիտի գառնան:

Ս. ՊԱՏՐԻԱՐԿ.—Յունիսի 8-ին կիւրակի օր, Պատր. փոխանորդ Գեր. Գարբիէլ ծ. վ. ձեւվահիրձեան և Բարկէն վ. Թարապիա երթալով Անգլիոյ Վիկտորիա թագուհու յորելեանի առթիւ ղեկավանատան մատրան մէջ կատարուած գոհարանական աղօթքներին ներկայ են գտնուել և պապ ղեկավանատուն երթալով ս. Պատրիարքի շնորհաւորութիւնները յայտնել են Սէր Ֆիլիպ Բըրրիին, Կ. Պօլսոյ Անգլիոյ ղեկավանին:

—Անգլիական ղեկավանատան Ա. թարգման Պ. Պլօգ Պատրիարքարան զալով՝ շնորհակալութիւն յայտնեց ս. Պատրիարքին:

— Ս. Պատրիարք Հայրը ղեկավանատան կողմէ եղած հրաւերի մը վերայ Թարապիոյ Անգլ. ղեկավանատունը երթալով իւր շնորհաւորութիւնները յայտնեց Սէր Ֆիլիպ Բըրրիին: Անգլիոյ թագուհու յորելեանի առթիւ:

ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ իւր նիստում որոշել է հե-

ռագրել Ամբրոսիոս վ. Ռուբինեանին, որ փութով Պօլիս գնայ, կրօնական ժողովի նորան անելիք ինչ ինչ հարցմանց պատասխանելու համար:—Ռուսահայերս պէտք է յիշենք այս ճոռոմխօս, ճարտասան, ճարտար վարդապետին, որ կրջանկալիշատակ Գեորգ Գ. հայրապետի կոնդակով, եթէ չեմ սխալուում, մօտ 20,000 ռուբլի հաւաքեց, որպէս զի այդ գրամով մի երկրագործական դպրոց բանայ Տաճկահայաստանում: սակայն մեզ մինչև ցայսօր յայտնի չէ այդ տեսակ մի դպրոցի գոյութիւնը: Երևի կրօնական ժողովի հարցումներից մինն էլ այս կը լինի և մենք վերջապէս մի բան կիմանանք այդ մասին:

— Արդուեցաւ որ յետ այսորիկ Կ. Պօլսոյ եկեղեցիների համար քահանայ չձեռնադրուի մինչև որ քահանաների արգի թուի և նոցա նիւթական վիճակի մասին որոշ տեղեկութիւն ձեռք բերուի: (Մասիս թ. 158):

ԲԱՆԱՆԱՅՈՒՆԵՐԻ ԽՆԴԻՐ.— Կրօնական ժողովի այս վերջին որոշումը մի խնդիր որ մեղնում էլ հերթական է: «Մասիս» խմբագրին հետեւալ խորհրդածութեանց առիթ է տուել:

«Ամեն ամեն ու գրեթէ ամեն գաւառային կեդրոններու մէջ այս կարևոր հարցը ներկայացած է, առաւել կամ նուազ ուժով:»

«Եւրաքանչիւր եկեղեցիի համար քահանաներու որոշ թիւ մը սահմանել, նկատի առնելով այն եկեղեցիին պատկանող թաղի կամ գիւղի ժողովրդեան թիւը, աւասիկ ինչ որ կրնայ իրել հիմ ծառայել Կրօն. ժողովի որոշման և առաջնորդել զայն քահանաներու ձեռնադրութեան համար կանոնագիր մը խմբագրելու: Կրօն. ժողովը հարկաւ մեզի հետ համամիտ է սա կէտին վրայ թէ պաշտօնեան պաշտօնին համար եղած է:» մտածելու այս կերպը որ այսօր կառաջնորդէ բոլոր լուսաւորեալ ժողովուրդները, ընտրողին և ընտրութիւնը վաւերացընողին երկու բան խորհել կուտայ 1. ընտրութեան անտեսական հանգամանքը, 2. ընտրութեան բարոյական հանգամանքը, Այսպէս ալ մեր քահանաներու ձեռնադրութիւնը նախ անտեսական տեսակէտով պէտք է քննուի, յետոյ նկատի առնուի ձեռնադրութեան բարոյական հանգամանքը:»

«Կրօն. ժողովը եթէ նկատի առնելով բոլոր այս հանգամանքները կանոնագիր մը խմբագրէ քահանաներու ձեռնադրութեանը շափ մը դնելու համար, մեր եկեղեցիի աւանդական կանոններուն համաձայն գործած կ'ըլլայ, Յայտնի է որ հին ամեն սովորաբար ամեն եկեղեցի մէկ քահանայ ունէր: յետոյ երբ քաղաքներու մէջ բնակիչները շատցան և մէկէ աւելի եկեղեցիներ շինուելով, մէկէ աւելի թաղերու բաժնուեցան, քահանաներու թիւն ալ եկեղեցիներու թիւին համեմատ աւելցաւ: Այսօր հարիւրաւոր գիւղեր կան որ մէկ եկեղեցի ու մէկ


քահանայ ունին: բաղմամբիւ քաղաքներ կան: որոնց մէկ թաղի մէկ եկեղեցիին համար մէկ քահանայ կայ: Իսկ մեր ամենէն նախնական գաւառներու մէջ, ինչպէս Խոյթ, Մոսրկան, Սասուն, Շատախ, Խուլիս, Խիան, Մոխս, Տէրսիմ եւն. երբեմն մէկ քահանայ մտակայ 3—4 գիւղերը կը հովուէ: Իրաւ է որ քահանաներու թիւին համար ոչ մի տեղ որոշ կանոն մը կայ: Բայց գրեթէ ամեն տեղ ժողովուրդը սովորութեամբ կամ աւանդութեամբ որոշ թիւ մը ընդունած է: Այսպէս գիւղեր կան: շատ անգամ 100—150 տունէ բաղկացած: որ մինակ այն ատեն քահանայացու մը կ'ընտրեն, երբ միւս քահանան ծերացեր է ու անկարող: քաղաքներու մէջ թաղեր կան որ միշտ չորս քահանայ ունին: ուրիշ թաղ մը երկու: ուրիշ թաղ մը երեք: թիւերը անփոփոխ կը մնան: որովհետեւ երբ քահանայ մը վախճանի, անոր ծուխերը բացը կը մընան և ժողովուրդը որոշում կուտայ նոր մը ընտրելու: Մեր քահանաներու ընտրութեան մէջ դիտելու ուրիշ խիստ կարեւոր բան մըն ալ կայ: ժառանգակամտիւր: Թէ քաղաքներու թէ գիւղերու մէջ, վախճանեալ քահանային յաջորդը միշտ կ'ընտրուի անոր զաւակներէն կամ գերդաստանէն: Երբ արու զաւակ չկայ ընտանիքին մէջ, երբ ընդունակ մարդ չկայ գերդաստանին մէջ, այն ատեն ընտրութիւնը խիստ կարեւոր խնդիր մըն է: անոր ուսումնասիրութիւնը ընկերային կարեւոր հարցեր ու փոփոխութիւններ պիտի դնէ մեր առջև: Եղած են քահանայական գերդաստաններ որ ամբողջ դար մը, երբեմն աւելի, քահանաներու յաջորդութիւն մը տուած են տեղացի ժողովրդին: Իսկ երբ ինկած է այդ գերդաստանի նիւթական ու բարոյական մակարդակը: ոչ միայն անարժաններ ու անպիտաններ յաջորդած են շատ անգամ, այլ այդ օտար յաջորդութիւնը տեղի տուած է բազմաթիւ գեղացիական ու թաղեցիական խռովութիւններու: և ասոնց ալ հետեանքը եղած է նոր եկեղեցիներու կառուցուիլը: քահանաներու թուին բազմանալը: անոնց կրօնական ազդեցութեան անկումը և նիւթական խեղճութիւնը: Այսպէս ժառանգական քահանայութիւնը, ինչպէս ամեն ժառանգական իշխանութիւն կամ նուիրապետութիւն, զարեւր է ի վեր որոշ չափ մը դրած էր քահանաներու ձեռնադրութեան մէջ: Ժողովուրդը յարգելով իր քահանայի գերդաստանը, որ թէ նիւթապէս թէ բարոյապէս բարձր մակարդակի վրայ կը գտնուէր, բնաւ թեթեւ որոշումներ չէր տար այլ և այլ տիրացուներու ձեռնադրութեան: Սակայն որովհետեւ ընկերային կազմակերպութիւնը միշտ յեղաշրջումի մէջ է, անտարակոյս մեր քահանայութեան այս պարզ ու ժողովրդական ձեւն ալ պիտի այլափոխուէր: Զեղծումը սկսաւ այն ատենէն, երբ վաճառքը սկսան տիրացուներ հասցնել, Այս տիրացուները նախ վարժապետ

եղան: յետոյ քահանայ, նոր տիրացուները աւելի ճարպիկ էին: քան հին բարի քահանաները, որոնք մեր եկեղեցիի մաքուր ու միամիտ բնազանցութեան հետ կը մշակէին նաև իրենց հողերը: Զեղծումը աւելցաւ քաղաքներու մէջ, Այն ատեն գտնուեցան առաջնորդներ և առաջնորդարանի ժողովներ կամ ժողովի ազդեցիկ անդամներ: որ այլ և այլ շահագիտական նպատակներով թոյլ տուին և մանաւանդ քաղաքեցիին քահանաներու ձեռնադրութիւնը: նոր տիրացուներու աչքը բացուեցաւ: Քահանայութիւնը տեսան որ շահնուտ արհեստ մըն է: Ջանքեր ըրին: մի քանի օտորագրութիւն կորզեցին ասկէ անկէ և հինգ տաս ոսկի ձեռքերնին՝ վազեցին մի քանի դիւրահաճ եպիսկոպոսներու: Զեռնադրուածները իրենց գիւղին կամ քաղաքին համար չէին անպատճառ, կրնային Պոլիս գալ, Պուլկարիա, Ռումանիա, Եգիպտոս, Ռուսաստան, Լնդկաստան անցնել ու ժողովրդի միամտութիւնը շահագործել: Այսպէս եղաւ: որ գտնուեցան 100—150 տունէ բաղկացեալ գիւղեր որ 10—13 քահանայ ունեցան !»

«Արեւմտեան մեր քահանաներու աւանդական ընտրութեան եղանակը փնտրելու է:

1. Ժողովրդի թիւին (ծխական դրութիւն):
2. Ժառանգական քահանայութեան
3. Քահանայացուի բարոյական հանգամանքին մէջ»:

Ի նկատի ունենալով, որ կրրուրեամբ միայն կարելի է գիտակցաբար բարոյական մարդ լինել, քահանայացուի ընտրութեան և ձեռնադրութեան գործում էական հանգամանքն այս պէտք է համարել: մանաւանդ եթէ աչքի առաջ ունենանք, որ ժողովրդի զլխաւոր առաջնորդները քահանաներն են:



Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Բ .

ՊԵՂՈՒՆԵՔ Ի ԿՈՆՏԱՆՍՏՆՈՒՆՍ ԳԵՏՄՈՒՆ ԶԵՅՐԵՊԵՏԻ.

Կոնստանդնուպոլսի հաստատութեան հոգաբարձութեան Հոգեւոր դպրանոցին Հայոց Երեւանայ, որով հրաւիրին ի պաշտօն նորընտիր հոգաբարձօք՝ պ. պ. Գրիգորն Ամիրեան, Տիգրանն Ամիրիկեան, Արտաշէան Դարբիէլեան, Տիգրանն Տ. Յակոբեան, Կարապետն Կամսարական և Զաքարն Գէորգեան և անձնափոխանորդք նոցին՝ պ. պ. րժ. Յովհաննէան Յովհաննիսեան, Դեորգն Անտոնեան, Դեորգն Տ. Սահակեան և Յովհաննէան Զաթալբաշեան: թ. 606:

— Օրհնութեան յանուն Գրիգորի Բաղամեան ի Շուշի: թ. 607: